# «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թերթի խմբագրությունը տարիներ շարունակ հաջողությամբ իրականացնում է ստանձնած առաքելությունը՝ վերածվելով յուրատեսակ կամրջի Վրաստանի եւ Հայաստանի միջեւ ու ապահովելով հաղորդակցությունը երկու հարեւան երկրների լրատվամիջոցների ներկայացուցիչների միջեւ:

Տեղեկացված եմ, որ «Վրաստանն» ընթերցողին մատուցում է հրատապ ու հետաքրքիր տեղեկատվություն երկրում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, մշակութային իրադարձությունների մասին:

«Վրաստանն» իր բովանդակությամբ եւ կոչումով բացառիկ հրատարակություն է Վրաստանի բազմազգ բնակչության շրջանում, քանի որ ընթերցողներին ներկայացնում է ճշգրիտ, օբյեկտիվ եւ հավասարակշռված տեղեկատվություն: Եվ ամենանշանակալին. թերթը իր հրապարակումներով նպաստում է բազմազգ Վրաստանում կայունության ամրապնդմանը, եւ այդ փաստը Վրաստանին բնորոշ բացառիկության ապացույցն է:

Արդարադատության նախարարի պաշտոնում իմ աշխատանքի օրոք նախարարությունը սերտ համագործակցում էր «Վրաստանի» հետ, թերթի էջերում օպերատիվ ներկայացվում էին նախարարության կողմից տրվող օրենսդրական փոփոխությունները, ինչն անհրաժեշտ էր, ինչն ուղղակի նպաստում է մեր ազգությամբ հայ քաղաքացիներին, քանի որ նրանցից շատերը, հատկապես՝ տարածաշրջաններում, գրեթե չեն տիրապետում պետական լեզվին: Այսօր եւս «Վրաստանը» օգնում է հայ բնակչության ինտեգրմանը երկրի հասարակական կյանքին:

Ի սրտե շնորհավորում եմ պարոն Վան Բայբուրթյանին եւ թերթի ողջ աշխատակազմին այդ նշանակալի տարեդարձի առիթով, մաղթում հաջողություններ, առաջընթաց, հետաքրքիր նորամուծություններ եւ հավատարիմ ընթերցողների աճող բանակ:

***ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ***

***Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար***

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մեկ անգամ չէ, որ այս կամ այն հարցով դիմել ենք խմբագրությանը, թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանին, եւ չեմ հիշում դեպք, երբ մեր դիմումը անտեսվել է: Բնականաբար, եղել են դեպքեր, երբ թերթը ուղղակի ի վիճակի չի եղել կարգավորել մեզ հուզող այս կամ այն հարցը, սակայն բոլոր դեպքերում հարցի լուծման համար այն՝ որպես ուղեցույց, ցույց է տվել, թե ինչպես գործել եւ ում դիմել: Մեր երախտագիտությունն ենք հայտնում «Վրաստանին»՝ անդրադառնալու տասնամյակներ շարունակ ցուցաբերած աջակցության, թերթի էջերում մեր շրջանի բնակիչներին ու նրանց բարի գործերին:

Սակայն, ըստ իս, «Վրաստանի» ամենանշանակալի առաքելությունը վիրահայությանը երկրում կատարվող իրադարձություններին կենսականորեն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումն է: Համենայնդեպս, մեզ՝ աղբյուրփեցիներիս համար «Վրաստանը» միշտ եղել ու մնում է տեղեկատվության ամենահուսալի աղբյուրը, որը, համոզված եմ, յուրատեսակ էտալոն է մյուս լրատվամիջոցների օբյեկտիվության ստուգման համար: Թերթից տեղեկանում ենք ոչ միայն օրենսդրական փոփոխությունների, կառավարական որոշումների, այլեւ տարբեր տարածաշրջանների վիրահայությանը հուզող հիմնախնդիրների, նաեւ ձեռքբերումների ու առաջընթացի մասին:

Շնորհավոր հոբելյանդ, հարազատ «Վրաստան»: Քո 100-ամյա բարձունքի երիտասարդական ավյունով շարունակիր պատմականորեն քեզ վերապահված առաքելությունը, ջահակրի եւ ուղեցույցի գործառույթը:

***ԳԻԳՈԼ ԱԹԱԲԵԿՅԱՆ***

***Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ներկայացուցիչ Աղբյուրփիի տարածքային միավորումում***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԶՐՈՒՑԱԿՑԻ ՀԵՏ

## ԱՍՅԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ. «ԾՆՈՂՆԵՐՍ ՎՐԱՑԵՐԵՆԻՆ ՎԱՏ ԷԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ...»



*Ընկերներիցս մեկը մի անգամ ճիշտ բան ասաց՝ համացանցը լավ բան է, եթե այն ճիշտ ես օգտագործում: Հետեւաբար, նաեւ սոցիալական հարթակները եւ այս պարագայում՝ ֆեյսբուքը: Համացանցի անծայր աշխարհը գովազդելու միտում չունեմ, ուղղակի նյութիս հերոսուհու հետ, ում սիրով ներկայացնելու եմ, հենց ֆեյսբուքյան հարթակում եմ ծանոթացել: Զրուցակիցս ծնունդով թբիլիսցի, այժմ երեւանաբնակ, վրացերենից հայերեն եւ հայերենից վրացերենի թարգմանիչ Ասյա Դարբինյանն է, իսկ ֆեյսբուքը՝ մեր զրույցի, թերեւս ամենահարմար ճանապարհը:*

***- Ողջույն, Ասյա, հետաքրքիր տեսանյութ ես բեռնել քո էջ, ուր անդրադառնում ես վրաց գրականությանն ու մշակույթին: Խոսքիդ մեջ այս նախադասությունը հատկապես գրավեց ուշադրությունս. «Վրաստանի պատմության մեջ կային նաեւ թագավորներ, որոնք ավելի հայտնի էին որպես բանաստեղծ, քան՝ թագավոր»...***

- Շնորհակալ եմ: «Բուն TV»-ի եւ ապա Հայաստանի հանրային ռադիոյի «Վերնատուն» հաղորդման շրջանակներում, հաճելի հնարավորություն ունեի խոսել հայկական եւ վրացական գեղարվեստական թարգմանչական գործի ներկա վիճակի եւ խնդիրների մասին: Առհասարակ, Վրաստանը համարում եմ մշակույթի ամենախոշոր օրրաններից մեկը, ուր մշտապես կարեւորվել է գրագետ ու կրթված սերունդ պատրաստելը: Դրա վկայություններից են հենց մշակութասեր թագավորները, միջնադարի Գելաթիի եւ Իղալթոյի ակադեմիաները, որոնք մեծ գիտաթարգմանչական դպրոցներ են ունեցել: Ես իսկապես հպարտություն եմ ապրում, որ վրացական մեծարժեք դպրոցի սաներից մեկն եմ:

***- Ծնվել, ապրել ու կրթություն ես ստացել Թբիլիսիում...***

- Այո՛: Ծնվել եմ 1987 թվականի ապրիլի 13-ին: Մենք ապրում էինք նախկին Դեկտեմբերի 5-ի (այժմ՝ Բերի Սալոսի) փողոցի վրա: Ավարտել եմ թիվ 99 վրացական դպրոցը: Հիշում եմ, երբ մայրս կայացրեց ինձ վրացական դպրոց տանելու որոշումը, մեր բարեկամները հանդիմանում ու նախատում էին ծնողներիս: Ծնողներս՝ Վարազդատ Դարբինյանն ու Էմմա Օվսյանը վատ էին տիրապետում վրացերենին, ինչը շատ էր խանգարում նրանց: Երկուսն էլ բանվոր էին: Չունենալով բարձրագույն կրթություն՝ ամեն ինչ արեցին, որ ես կյանքից ստանայի լավագույնը՝ կրթություն: Եվ այն էլ՝ ճիշտ կրթություն: Լինելով ընտանիքի միակ զավակը՝ ծնողներս իրենց դառը վաստակով ապահովում էին ինձ հարուստ գրադարանով, մշակութային կյանքով, այն ամենով, ինչը թույլ կտար ապրել այն մանկությունն ու պատանեկությունը, որն իրենք չէին ունեցել, ունենալ այն ապագան, որն ունեմ եւ դեռ ունենալու եմ:

***- Ապագա հայագետի հայերենը, փաստորեն, ձեւավորվում էր տանը:***

- Խոսակցականն՝ այո, որը հետագայում կատարելագործվեց Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի Արեւելագիտական ֆակուլտետի Հայագիտության բաժնում սովորելիս, որն այն օրերին ղեկավարում էր աշխարհահռչակ հայագետ Զազա Ալեքսիձեն (ի դեպ, հաջորդ տարի բաժինը կնշի իր 100-ամյակը, քանի որ բացվել է համալսարանի հիմնադրումից չորս տարի անց՝ 1922 թվականին, թբիլիսցի պրոֆեսոր Մելիքսեթ-Բեկի ղեկավարությամբ): Ուզում եմ հատկապես նշել, որ ինձ հայերեն եւ գրաբար դասավանդել են ազգությամբ վրացի լավագույն հայագետներ, այդ թվում՝ Մերաբ Ռոբաքիձեն: Այնուհետեւ ուսումս շարունակել եմ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ավարտել եմ ժամանակակից «Հայոց լեզու եւ թարգմանչական գործ» բաժինը, այժմ Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ եմ: Աշխատանքային առաջին քայլերս արել եմ Երեւանի Վ.Բրյուսովի անվան համալսարանում, 2011 թվականից դասավանդում եմ վրաց լեզու, 2012 թվականից մինչ օրս աշխատում եմ ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի Կովկասագիտության բաժնում՝ որպես վրացերենի դասախոս: 2018-ից որպես դասախոս մասնակցում եմ միջազգային խոշոր Erasmus+ ոչ ֆորմալ կրթական ծրագրերին:

***- Ծնողներդ իսկապես իմաստուն էին... իսկ ե՞րբ ծնվեց առաջին թարգմանությունը:***

- Ուսանողական տարիներին՝ 2007-ին, երբ համալսարանական «Լիլ» թերթում իմ թարգմանությամբ տպագրվեց Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակը»: Ապա վրացերեն թարգմանեցի Նար-Դոսի «Հոգուն վրա հասավ», «Թե ինչ եղավ հետո...» պատմվածքները, Հովհաննես Թումանյանի «Նամականին», թարգմանել եմ նաեւ ժամանակակից գրողներ Դիանա Համբարձումյանի, Վիոլետ Գրիգորյանի, Արփի Ոսկանյանի, Մարինե Պետրոսյանի, Արամ Ավետիսի եւ ուրիշների ստեղծագործություններից: Ինչպես նաեւ վրացերենից հայերեն՝ վրաց դասականներ Նիկո Լորթքիփանիձեին, Գուրամ Ռչեուլիշվիլիին...

2015 թվականից վրացի բանաստեղծուհի Դիանա Անֆիմիադիի հետ, Թբիլիսիի միջազգային գրական փառատոնի շրջանակներում, թարգմանում եմ ժամանակակից հայ բանաստեղծների: Ի դեպ, 2016 թվականին Վիոլետ Գրիգորյանի բանաստեղծությունների թարգմանության համար ես եւ բանաստեղծ Դիանա Անֆիմիադին վրաց հայտնի գրող Վախուշտի Կոտետիշվիլու անվան թարգմանական մրցանակի առաջին տեղն ենք զբաղեցրել:

***- Իսկ ինչպե՞ս ես ընտրում թարգմանական գործերը: Ըստ քեզ, թարգմանությունն առաքելությո՞ւն է, թե՞ աշխատանք:***

- Փորձում եմ թարգմանել իմ սիրելի հայ եւ վրացի հեղինակներին, որպեսզի իմ երկու մայրենիների իմացությունը եւս մեկ կամուրջ դառնա դարեր շարունակ կողք- կողքի ապրող ժողովուրդներին միմյանց առավել ճանաչելի դարձնելու համար: Այո՛, ես երկու մայրենի ունեմ՝ վրացերենն ու հայերենը, իմ մեջ կրում եմ երկուսի լեզվամտածողությունն ու հոգեբանությունը, ուստի թարգմանությունն ինձ համար, կարծում եմ, ճակատագրով պարտադրված առաքելություն է նաեւ: Ուզում եմ այս լեզուներով գրվող իմ սիրելի գրականությունը հասանելի դարձնել երկու երկրների ընթերցողներին: Թարգմանությունը շատ պատասխանատու գործ է, բայց բոլոր դժվարությունները հաղթահարելու ճանապարհին ինձ մշտապես օգնում է սերը մեր երկու ժողովուրդների գրականությունների հանդեպ:

Թարգմանական աշխատանքը շատ բարդ եւ պատասխանատու է, բայց արդյունքն ու հետեւանքն այնքան քաղցր են, որ միանգամից մոռացվում են բոլոր անքուն գիշերներն ու տանջանքները:

***- Ովքե՞ր են քո ընթերցողները, ինչպե՞ս են ընդունվում թարգմանությունները, եւ որտե՞ղ են տպագրվում:***

- Ընթերցողներս իմ ամենամտերիմ ընկերներն ու աջակիցներն են, որոնց օգնությամբ այս պատասխանատու եւ մեծ աշխատանքը կարողանում եմ, այսպես ասած, գլուխ բերել: Հայերենից վրացերեն յուրաքանչյուր ստեղծագործություն անցնում է իմ ամենամտերիմ ընկերուհու՝ Նաթիա Դունդուայի, իսկ վրացերենից հայերենը նախկին ուսանողուհուս՝ Հասմիկ Ասոյանի ձեռքի տակով: Եթե չլիներ աջակցելու նրանց իսկայական պատրաստակամությունը, վստահեցնում եմ, միայնակ չէի կարողանա: Պետք է ընդգծեմ, որ իմ թարգմանությունների առաջին ընթերցողն ու խորհրդատուն վերջերս մահացած երեւանցի կովկասագետ, վրացագետ պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանն էր, ում յուրաքանչյուր խորհուրդն ու դիտողությունն անչափ կարեւոր եւ ուսուցողական էր ինձ համար...

Հիմնականում դրական արձագանք եմ ստանում ավագ ընկերներիս՝ դասախոսներիս կողմից, ինչը ինձ համար մեծ պատիվ է: Ուրախանում եմ նաեւ իմ շատ սիրելի խմբագիր, թբիլիսցի Մզիա Բուրջանաձեի յուրաքանչյուր խորհրդից, քանի որ նման մասնագետի խիստ եւ ճիշտ գնահատականը ինձ աճելու եւ լավ թարգմանիչ դառնալու հարցում շատ է օգնում: Իսկ թարգմանություններս տպագրվում են ինչպես Հայաստանի, այնպես էլ՝ Վրաստանի գրական հանդեսներում՝ «Արմաղանի», «Ախալի սաունջե», «Գանթիադի», հայկական «Գրանիշ» եւ «Գրողուցավ» կայքերում:

***- Ինքդ գրու՞մ ես:***

- Չեմ փորձել...

***- Ինչպիսի՞ն են առաջիկա ծրագրերը՝ հա՞յ, թե՞ վրաց ընթերցողն է վայելելու քո նոր գիրքը:***

- Երեւի, երկուսը միաժամանակ: Որովհետեւ Վրաստանի Գրողների միության եւ «Գրքի կենտրոնի» աջակցությամբ մինչեւ տարեվերջ հրատարակվելու է «Ժամանակակից հայ պոեզիա» անթոլոգիան՝ վրացերեն եւ ժամանակակից վրաց գրող Արչիլ Քիքոձեի «Հարավային փիղը» վեպը՝ հայերեն, ինչպես նաեւ Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ լույս է տեսնելու Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարը՝ վրացերեն: Եվս մի քանի ժամանակակից հեղինակների թարգմանության մասին եմ մտածում, բայց այդ մասին, կարծում եմ, վաղ է խոսել:

***- Ասյա, ուրախ եմ, որ մեր հարցազրույցը «Վրաստանի» հոբելյանական տարվա համարում է լույս տեսնում: Կարծում եմ՝ ժամանակին թերթել ես այն...***

- Իսկ ո՞վ ասաց, որ հիմա չեմ թերթում: «Վրաստանը» հայ-վրացական բազմոլորտ կապերի, այդ թվում՝ մշակույթի մերձեցումն ապահովողներից մեկն է, ուստի եղել եւ շարունակելու է մնալ իմ՝ հայ-վրացական դարավոր կապերն է՛լ ավելի ամրապնդելու ցանկությունն ունեցողի գրասեղանին: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ու շնորհավորել իմ եւ բոլոր վիրահայերի ամենասիրելի «Վրաստան» թերթի հարյուրամյակը:

Անկանգ երթ քեզ, «Վրաստան»...

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***

COVID - 19

# ՑԱՄԱՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԲԱՑՎԵՑԻՆ, ԻՍԿ ՈՐՈՇ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՄԵՂՄԱՑՎԵՑԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստան մուտք գործող այցելուները պարտավոր են ունենալ բժշկական ապահովագրություն՝ գնված իրենց երկրում կամ Վրաստանում:

Վրաստանի կառավարությունում գործող միջգերատեսչական խորհրդի որոշմամբ, հունիսի 1-ից մեղմացվեցին նաեւ կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով սահմանված առանձին սահմանափակումներ:

Մասնավորապես, օտարերկրացիների համար ցամաքային սահմանի բացման հետ միասին, հունիսի 1-ից ամբողջությամբ վերացվեցին սննդի կետերի սահմանափակումները, ինչը նշանակում է, որ վերջիններս կարող են աշխատել փակ տարածքներում նաեւ շաբաթ եւ կիրակի օրերին:

Վրաստանի կառավարության որոշմամբ, երկրում ուժի մեջ են մնում տարբեր սոցիալական՝ հարսանիքների, թաղման արարողությունների, բանկետների եւ այլ միջոցառումների անցկացման սահմանափակումները:

Հունիսի 1-ից փոխվում է տեղաշարժի սահմանափակման ժամկետը, այն կգործի 23:00-ից մինչեւ 04:00-ը, նախկին 05:00-ի փոխարեն:

# COVID-19-Ի ԴԵՄ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ ԱՐԴԵՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ Է ԱՆՑԵԼ ՇՈՒՐՋ 150 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

*Հունիսի 2-ի դրությամբ, Վրաստանում կորոնավիրուսի դեմ ընդհանուր հաշվով պատվաստվել է 149 191, լրիվ պատվաստման կուրսն անցել է 33 718 քաղաքացի:*

Հիշեցնենք, որ Վրաստանում պատվաստման գործընթացը մեկնարկեց մարտի 15-ից՝ միայն բժշկական ոլորտի աշխատողների համար: Ավելի ուշ, պատվաստվողների խումբն ընդլայնվեց, եւ պատվաստվել սկսեցին նաեւ 65 տարեկանից բարձր քաղաքացիները: Այժմ AstraZeneca տեսակի պատվաստանյութով պատվաստվելու համար կարող են գրանցվել 45 տարեկանից բարձր քաղաքացիները:

18 տարեկանից բարձր քաղաքացիների պատվաստումն ընթանում է չինական «Սինոֆարմ» տեսակի պատվաստանյութով: Մայիսի 24-ից 18 տարեկանից բարձր քաղաքացիները պատվաստվում են «Սինովակ» տեսակի պատվաստանյութով:

# COVID-Ի ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԽԱՏԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 50 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՆ

*Տեղեկատվության ազատության զարգացման ինստիտուտը (IDFI) հրապարակել է ուսումնասիրություն՝ «De facto արտակարգ դրության մեկ տարի Վրաստանում եւ մարդու իրավունքները համավարակային պայմաններում» խորագրով:*




Կազմակերպությունը նշում է, որ Covid կանոնակարգերի սահմանման եւ իրականացման գործընթացը առաջացնում է մարդու հիմնարար իրավունքների խախտման ռիսկը:

Հետազոտության համաձայն, Covid-ի կանոնակարգերը խախտելու համար նշանակվել է 112,991 տուգանք, իսկ տուգանքների ընդհանուր չափը գերազանցում է 50 000 000 լարին: Կազմակերպության տվյալներով, տուգանքներից շուրջ 60 000-ը ամենայն հավանականությամբ, անօրինական են: Տվյալներն ընդգրկում են մինչեւ 2021 թվականի փետրվար ժամանակահատվածը:

Կազմակերպության հայտարարությամբ, համավարակի ընթացքում խորհրդարանը չի կարողանում արդյունավետ վերահսկողություն իրականացնել գործադիր իշխանության նկատմամբ, եւ պարետային ժամը չի համապատասխանում համամասնության սկզբունքին: IDFI-ը նշում է, որ կան հարցեր, թե ինչքանով է արդյունավետ ապահովում պարետային ժամը բնակիչների տանը մնալը:

Հիշեցնենք՝ Վրաստանում 2020 թվականի նոյեմբերից գործում է երեկոյան ժամերի տեղաշարժի արգելքը, որի խախտման համար ֆիզիկական անձը տուգանվում է 2000, իրավաբանական անձը՝ 10000 լարիով: Դիմակ չկրելու համար տուգանքը կազմում է 20 լարի, խախտումը կրկնելու դեպքում՝ 40 լարի:

*Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍԵԼ Է ՇՈՒՐՋ 173 ՄԻԼԻՈՆԻ

*COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 172 916 734-ից: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 3 717 497-ը: Ապաքինվել է 155 միլիոն 645 հազար 850 մարդ:*

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **34 174 752** դեպք: Այստեղ մահացածների թիվը **611 611** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **28 574 350**-ի, մահացածներինը՝ **340 719**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **16 803 472**, մահացել՝ **469 784** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **5 694 076**, վարակի հետեւանքով մահացել՝ **109 857** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Թուրքիան, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Արգենտինան ու Գերմանիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **223 050-ի**, մահացածներինը՝ **4 452-ի**, ապաքինվածներինը՝ **214 059**-ի:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **334 416** մարդ: Վարակից մահացել է **4 929,** ապաքինվել՝ **325 863** մարդ:

**Վրաստանում,** վերջին տվյալներով, վարակվել է **347 762,** մահացել՝ **4 876,** ապաքինվել՝ **331 680** մարդ:

*Հունիսի 4-ին կորոնավիրուսով վարակման 779 նոր դեպքերից **401-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 69, Իմերեթիում՝ 66, Քվեմո Քարթլիում՝ 46, Շիդա Քարթլիում՝ 24, Գուրիայում՝ 15, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 69, Կախեթիում՝ 37, Մցխեթա-Մթիանեթիում՝ 20, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 8, Սամցխե-Ջավախեթիում՝ 24:***

# ՊԱԱՏԱ ԻՄՆԱՁԵ. «2-ՐԴ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԻՑ ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹ ԱՆՑ, ԵՐԵՎԻ, ԴԻՄԱԿՆ ԱՐԴԵՆ ԱՎԵԼՈՐԴ ԿԼԻՆԻ»



*Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավարի տեղակալ Պաատա Իմնաձեի հայտարարությամբ, կորոնավիրուսի պատվաստանյութի երկրորդ դեղաչափից երկու շաբաթ անց, մարդը լիովին իմունացված է եւ, պատվաստված անձանց շրջապատում գտնվելիս, կկարողանա լինել առանց պաշտպանիչ դիմակի:*

- Երկրորդ ներարկումից երկու շաբաթ անց ենթադրվում է, որ մարդը արդեն լիովին անձեռնմխելի է: Հետեւաբար, երկրորդ պատվաստումից մոտ երկու շաբաթ անց, դուք կարող եք շատ ազատ լինել, առանց պաշտպանիչ դիմակի, եթե ձեր շուրջը պատվաստված են: Սա շատ կարեւոր է: Երբ շուրջբոլորը երկու անգամ պատվաստված են, կարող եք առանց պաշտպանիչ դիմակի լինել ձեր սիրելիների կողքին, գրկել նրանց, առանց որեւէ խնդրի լինել նրանց հետ նույն սեղանի շուրջ: Դրա համար ձեր շուրջբոլորը պետք է երկու անգամ պատվաստված լինեն,- նշեց Պաատա Իմնաձեն:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԱՆՈՒՅՇԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ Է, ԱՐՅԱՆ ԿԱՆՉԸ



*Աշխատանքային ամեն առավոտ, հատելով 5-6 կիլոմետր, Նինոծմինդա քաղաքից դեպի Մեծ Խանչալի է շտապում երկրում հարգված ու սիրված ուսուցչուհի Սիրանույշ Այվազյանը...*

Հայոց լեզվի ու գրականության փորձառատ մանկավարժի անունը Նինոծմինդայի շրջանում շատերին է ծանոթ:

Այս տարի վաստակաշատ մանկավարժը դարձավ 60 տարեկան: Բայց ինչպես նշում են շրջապատում, 60՝ միայն տարեթվով, որովհետեւ երիտասարդության եռանդն առաջվա պես կա, եւ աշակերտներին մայրենի հայերենը լիարժեք մատուցելու ցանկությունն առաջվա պես անսպառ է Սիրանույշի մեջ: Ժամանակի, տարիների հերթափոխի հետ ոչինչ չի փոխվել, նույն ուսուցչուհին է, ով արդեն 42 տարի առաջնորդվում է կյանքի իր բանաձեւով ու անկեղծորեն խոստովանում այդ մասին՝ միշտ կրկնելով. «Մանկավարժությունն իմ էությունն է, ապրելակերպը, արյան կանչը»:

Ծնվել ու մեծացել է Ախալքալաքի մունիցիպալիտետի Կորխ գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1981-1987 թվականներին սովորել Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Իսկ նրա աշխատանքային կենսագրությունը սկսվել է հարազատ Կորխի միջնակարգ դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար:

...«Սովետական Վրաստան» (այժմ՝ «Վրաստան») թերթում համարյա 30 տարի առաջ տպագրված մի հոդված կա, որտեղ երիտասարդ ջոկատավարուհի Սիրանույշ Այվազյանի մասին գրված է. «Համեստ բնավորություն ունի Սիրանույշը, փխրուն հոգի, մանկական անմիջականություն: Գուցե հենց այս գծերն են, որ, զուգակցվելով նրա անսահման աշխատասիրությանն ու համառությանը, օգնել են պիոներական աշխատանքում հասնելու մեծ հաջողությունների, դարձրել պիոներ-դպրոցականների սիրելին»:

Տարիների հետ, մարդկային այդ գծերին գումարվող մասնագիտական անսպառ գիտելիքներն ու մասնագիտական հմտությունները, Սիրանույշ Այվազյանին դարձնում են նախ՝ Փոքր Խանչալիի ապա եւ Մեծ Խանչալիի այն ուսուցչուհին, ում դասերը երբեք անգույն ու միապաղաղ չեն անցնում, այլ մշտապես հագեցված են լինում զգացմունքայնությամբ, ջերմությամբ, սիրով:

Եվ այդպես շարունակաբար հոգու բովանդակ լույսն ու ջերմությունն անմնացորդ սաներին տվող մանկավարժն այսօր արժանիորեն վայելում է իր կյանքի ամենամեծ պարգեւը՝ աշակերտների մաքուր ու անմնացորդ սերը: Ասվածի վկան այն աշակերտներն են, որ, արդեն ավարտած ու կայացած մասնագետներ լինելով, երազում են գոնե մեկ անգամ նորից նստել «ընկեր Սիրանույշի» դասերին ու նորից լսել նրա մատչելի եւ ուսանելի խոսքը:

Սիրանույշ Այվազյան ուսուցչուհու մասին շատ է գրվել մամուլում, տեղական հեռուստատեսությունն ու ռադիոն նույնպես բազմիցս անդրադարձել են նրան: Ուսուցչուհու հուշապահարանում սիրով պահվում են աշակերտներից, գործընկերներից, ընկերներից եւ պարզապես ծանոթներից ստացած բազմաթիվ նամակներ, շնորհավորանքներ ու շնորհակալագրեր:

Պահարանի այդ «հարստությունը» թերթելիս՝ հանդիպեցի հետեւյալ տողերին. «Չեմ պատկերացնում հրաժեշտի պահը, իմ շատ սիրելի դասղեկ Այվազյան, չեմ կարող բաժանվել Ձեզանից, Ձեր ջերմությունից ու բարի խորհուրդներից, Ձեր մայրական գուրգուրանքից: Գլուխ եմ խոնարհում Ձեր մեծ հոգու առջեւ: Ես կուզենայի, որ բոլորը նմանվեն Ձեզ, Ձեր սիրով, Ձեր աչքերով մեզ տաքացնեն...»:

Բազմաթիվ ու բազմաբովանդակ են նաեւ միջոցառումները, որ անցկացնում է Սիրանույշ Այվազյանը դպրոցական երեկոներին՝ «Վահան-Տերյան», «Չարենց», «Սայաթ-Նովա», «Ջիվանի», «Մեր լեզուն մեր խիղճն է»...

Նրա մանկավարժական գործունեությունը բարձր է գնահատվել: Սիրանույշ Այվազյանը ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից պարգեւատրվել է «Սփյուռքում հայոց լեզվի պահպանման եւ զարգացման գործում ունեցած ներդրման, երիտասարդների հայեցի կրթության ու դաստիարակության պատվոգրով» եւ «Մայրենիի դեսպան» մեդալով:

Ասվածին ավելացնենք, որ «Սամցխե-Ջավախեթիի վաստակաշատ մանկավարժների մասին» տեղեկատվական գրքույկում իր առանձնահատուկ տեղն ունի Սիրանույշ Այվազյանին ներկայացնող տեղեկատվությունը:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի Մեծ Խանչալիի դպրոցը եւ ողջ գյուղը շնորհավորում են տարեդարձդ, սիրված Ուսուցիչ:

*ՍԻՐԱՆՈՒՅՇ ՊՈՂՈՍՅԱՆ*

*Նինոծմինդայի մունիցիպալիտետ*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## «ԱՅՍ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՔԻՆ Է»

(Սկիզբը` 1-ին էջում)




Ինչպես նշեց Ֆրանսիայի նախագահը, Հայաստանն այսօր բախվել է անվտանգության լուրջ ճգնաժամի:

- Նոյեմբերի 9-ի հրադադարի հայտարարությունից ի վեր, որը վերջ դրեց Ղարաբաղում պատերազմական գործողություններին, մենք, պարոն Փաշինյանի հետ գնահատելով իրավիճակը, նկատում ենք, որ եթե անգամ հրադադարն ընդհանուր առմամբ պահպանվում է, շատ անելիքներ կան,- հայտարարեց Էմանուել Մակրոնը եւ հավելեց, որ Ֆրանսիան միշտ Հայաստանի կողքին է:

Ֆրանսիա կատարած այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը Փարիզում ծաղիկներ խոնարհեց աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի պատվին տեղադրված նոր կիսանդրու առաջ` հարգանքի տուրք մատուցելով նրա հիշատակին:

Հիշեցնենք, որ կիսանդրու բացման արարողությունը տեղի է ունեցել Ազնավուրի ծննդյան 97-ամյակի օրը` մայիսի 22-ին, Փարիզում` Լատինական թաղամասի Օդեոնի հրապարակում:

Կիսանդրու հեղինակը հայ քանդակագործ Ալիս Մելիքյանն է:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԲԵԼԳԻԱ

*Նիկոլ Փաշինյանը, Ֆրանսիա կատարած այցից հետո, հունիսի 2-ին Փարիզից ժամանեց Բելգիայի մայրաքաղաք Բրյուսել:*



Բրյուսելում նա հանդիպեց Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Հանդիպման օրակարգում ինչպես երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր էին, այնպես էլ` Հայաստան-Եվրամիություն հարաբերությունները, Հայաստանում հետպատերազմյան իրավիճակը, պատերազմի հետեւանքով տուժած ընտանիքներին հումանիտար աջակցություն ցուցաբերելու հնարավորությունները, ինչպես նաեւ Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների իրականացմանն ուղղված հետագա համագործակցության այլ հարցեր:

Նույն օրը Նիկոլ Փաշինյանը հանդիպեց նաեւ Բելգիայի վարչապետ Ալեքսանդր Դե Կրոնի հետ: Հանդիպմանը կողմերը կարեւորեցին Հայաստանի եւ Բելգիայի միջեւ քաղաքական ու տնտեսական հարաբերությունների շարունակական զարգացումը եւ այս համատեքստում ընդգծեցին բարձր մակարդակի շփումների նշանակությունը:

Ալեքսանդր Դե Կրոն, կարեւորելով Հայաստանի հետ տնտեսական կապերի զարգացումը, նշեց, որ նախատեսվում է Բելգիայի առեւտրային առաքելության այցը, որը ծրագրվում է Բելգիայում հայկական համայնքի հիմնադրման 100-ամյակի տոնակատարության միջոցառումներին զուգահեռ: Հունիսի 3-ին վերադարձավ Երեւան:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ



*Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հունիսի 3-4-ը աշխատանքային այցով գտնվում էր Ղազախստանում: Այցի շրջանակներում, Հայաստանի ղեկավարը հանդիպում ունեցավ Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի հետ:*

Հանդիպմանը մասնակցել են Ղազախստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Մուխթար Թլեուբերդին, առեւտրի եւ ինտեգրման նախարար Բախիտ Սուլթանովը, պաշտոնատար այլ անձինք:

Հանդիպմանը Հայաստանի եւ Ղազախստանի նախագահները խոսեցին Եվրասիական տնտեսական միության, ՀԱՊԿ շրջանակում համագործակցության մասին: Հայաստանի նախագահին անդրադարձավ հետպատերազմյան շրջանում Հայաստանում եւ տարածաշրջանում եղած խնդիրներին ու մարտահրավերներին:

Հայաստանի եւ Ղազախստանի նախագահները քննարկումները շարունակեցին առանձնազրույցի ձեւաչափով: Քննարկումների առանցքում կրկին երկկողմ հարաբերություններն էին եւ տարածաշրջանային իրավիճակին վերաբերող հարցեր:

## ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՍՓՅՈՒՌՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵՍՊԱՆ» ԾՐԱԳԻՐԸ

*Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հովանավորությամբ, 2021 թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 9-ը Հայաստանում կիրականացնի «Սփյուռքի երիտասարդ դեսպաններ» ծրագիրը:*

Այն կազմակերպվում է առաջին անգամ եւ նպատակ ունի աջակցել Սփյուռքի այն երիտասարդներին, ովքեր ներգրավված են Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործընթացներում եւ աշխատանքներ են տանում համայնքային կյանքի ակտիվացման ուղղությամբ:

Ծրագրի դիմորդները կարող են դառնալ 22-35 տարեկան սփյուռքահայ այն երիտասարդները, ովքեր առնվազն 5 տարի բնակվում են Սփյուռքում, Սփյուռքի հայկական համայնքների ակտիվ եւ ներկայացուցչական անդամներ են, տիրապետում են հայերենին, ցանկություն ունեն ներդրում ունենալ Հայաստանի շահերն առաջ տանելու, ինչպես նաեւ Հայաստան-Սփյուռք հարաբերություններն ամրապնդելու գործում, ունեն մեդիա կոնտենտ գրելու փորձառություն (ցանկալի է):

Հայտադիմումները կընդունվեն մինչեւ հունիսի 25-ը:

## ՎՐԱՍՏԱՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ

*Թուրքական ծագման վերջնական սպառման ապրանքների ներկրման սահմանափակումը տարածվում է նաեւ Վրաստանից անձնական օգտագործման նպատակով հնարավոր ներկրվող ապրանքների նկատմամբ:*

Ինչպես ասաց Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) նախագահ Էդվարդ Հովհաննիսյանը, թուրքական ծագման ապրանքների ներկրումը սահմանափակվել է:

- Հունիսի 1-ից արդեն Վրաստանի սահմանը բաց է, եւ որոշակի ժամանակահատվածում թույլատրվում է ֆիզիկական անձանց տեղաշարժը: Սահմանափակումը նաեւ վերաբերում է ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով հնարավոր ներկրվող ապրանքներին,- ասաց Հովհաննիսյանը:

Նա քաղաքացիներին հորդորեց սահմանով Հայաստան թուրքական ծագման ապրանք ներկրելու փորձ չանել: Մաքսային հսկողությունն ունի իր կանոնները, եւ Հովհաննիսյանը վստահեցրեց, որ այդ կանոններին համապատասխան ստուգումներ կարվեն` կանխելու նման դեպքերը:

- Վստահ եմ, որ մեր քաղաքացիները շատ լավ տիրապետում են այն իրողությանը, որ մաքսային սահմանով տեղափոխվելու ժամանակ բոլոր իրերը, ճամպրուկները հարկ եղած դեպքում ենթակա են զննության,- նշեց նա:

Հիշեցնենք, որ Հայաստանի կառավարությունը իր` 2020 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ, ժամանակավոր արգելք է դրել թուրքական ծագում ունեցող սպառման ապրանքների ներմուծման վրա: Արգելքն ուժի մեջ է 2020 թվականի դեկտեմբերի 31-ից: Հայաստանը մտադիր է երկարաձգել արգելքի ուժի մեջ լինելու ժամկետը:

### ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՎԱՐԿԱՆԻՇՆ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆ Է

*Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) հրապարակած հարցման արդյունքներով, Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը Հայաստանում շարունակում է մնալ ամենաբարձր վարկանիշ ունեցող քաղաքական գործիչը: Հարցվածների 16 տոկոսը Նիկոլ Փաշինյանին գնահատել է «շատ բարենպաստ», իսկ 29 տոկոսը` «բարենպաստ»:*

*Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին հարցվածների 5 տոկոսը գնահատել է «շատ բարենպաստ», իսկ 35 տոկոսը «բարենպաստ», իսկ փոխվարչապետի պաշտոնակատար Տիգրան Ավինյանին` 3 տոկոսը «շատ բարենպաստ», իսկ 27 տոկոսը` «բարենպաստ»:*

*Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանին հարցվածների 3 տոկոսը գնահատել է «շատ բարենպաստ», իսկ 25 տոկոսը «բարենպաստ»:*

*Ընդդիմադիր գործիչներից Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին 5 տոկոսը գնահատել է «շատ բարենպաստ», իսկ 15 տոկոս «բարենպաստ»:*

*Հարցումն իրականացվել է Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից, վերլուծության կենտրոնի պատվերով:*

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ՍՅՈՒՆԻՔ ԵՎ ԱՐՑԱԽ

*Հունիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը` հոգեւորականաց պատվիրակության ուղեկցությամբ, հայրապետական այցով եղավ Սյունիքի մարզում, որից հետո ուղեւորվեց Արցախ: Վեհափառ Հայրապետի հետ Արցախ մեկնեց նաեւ Ամերիկայի Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանը:*

*Սյունիք այցի շրջանակներում, Վեհափառ Հայրապետը եղավ Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Նորին Սրբությունը զինվորական պանթեոնում իր խոնարհումը բերեց եւ աղոթեց ի սեր հայրենյաց զոհված քաջորդիների հոգիների հանգստության համար:*

*Նույն օրը Վեհափառ Հայրապետը` Պերճ Սեդրակյանի ուղեկցությամբ, այցելեց Շուռնուխի սահմանամերձ համայնք: Նորին Սրբությունն իր զորակցությունը բերեց շուռնուխցիներին: Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ ՀԲԸՄ նախագահը բնակիչների հետ զրույցեին տիրող անհանգստությունների ու առկա խնդիրների, կյանքի բնականոն ընթացքի խաթարման եւ վտանգների մասին:*

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ ԵՆ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

*Հունիսի 1-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ վարչապետ Միխայիլ Միշուստինը ծննդյան օրվա առթիվ շնորհավորել են Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին:*

*Իր շնորհավորական ուղերձում ՌԴ նախագահը նշել է, որ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները շատ հաջող են զարգանում: «Վստահ եմ, որ համատեղ ջանքերով հետագայում եւս հնարավորինս կամրապնդենք երկկողմ դաշնակցային հարաբերությունները` ի նպաստ մեր բարեկամական ժողովուրդների, ի շահ Անդրկովկասյան տարածաշրջանում խաղաղության, անվտանգության եւ կայունության ամրապնդման:*

*Սրտանց ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, երջանկություն, բարեկեցություն եւ հաջողություն»:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

# ՄԵՔԵՆԱՆ ՀԱՐԲԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ՎԱՐԵԼԸ ԿԱՐՈՂ Է ԱՎԱՐՏՎԵԼ ԿԱԼԱՆՔՈՎ

*Տրանսպորտը հարբած վարելը, հնարավոր է՝ հանգեցնի ծերբակալության:*

Նման օրենսդրական նախաձեռնությամբ հանդես են եկել Լեւան Իոսելիանին եւ Ալեկո Էլիսաշվիլին: Օրենսդրական փոփոխությունը նախատեսում է պատժաժամկետի սահմանում հարբած վիճակում մեքենա վարողների համար:

Վերոնշյալ օրինանախագծով փոփոխվում է «Վարչական օրենքի օրենսգրքի» 116-րդ հոդվածը: Մասնավորապես, տրանսպորտային միջոցը հարբած վիճակում վարելիս, ինչպես նաեւ օրենդրությամբ նախատեսված կարգով ալկոհոլային ստուգումից հրաժարվելու դեպքում, որպես պատասխանատվություն սահմանված էր տրանսպորտային միջոցի վարման, այն է՝ վարորդական վկայականի վեց ամսվա փոխարեն, մեկ տարով չեղարկում: Միաժամանակ, վարորդական վկայականի չեղարկման ժամանակահատվածում հարբած վիճակում տրանսպորտային միջոցը վարելիս կամ տրանսպորտային միջոցը վարելու ժամանակ ալկոհոլային ստուգումից հրաժարվելու դեպքում, իրավախախտը պատժվում է 2 հազար լարի տուգանքով, վարչական կալանքով՝ 5-15 օր, մեկ տարով՝ վարորդական իրավունքի չեղարկման ժամկետի ավելացմամբ:

# ՍՊԱՌՎԵԼ Է ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՔՍԱԶԵՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

*Վրաստանի ներքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության համաձայն, հունիսի 1-ին սպառվեց ավտոմեքենաների մաքսազերծման ժամկետը:*

Ըստ հաղորդագրության, այն քաղաքացիները, ովքեր Վրաստան փոխադրամիջոցներ են ներմուծել 2019 թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ 2020 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում եւ մինչեւ 2021 թվականի մայիսի 31-ը չեն անցել մաքսային ընթացակարգերը, հունիսի 1-ից ենթարկվելու են օրենքով սահմանված տույժերի:



ժամկետանց օրվա համար տուգանքը 50 լարի է (մոտ 15 դոլար), ընդ որում՝ սեփականատերը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում մաքսազերծում անել, հակառակ դեպքում, կրկնակի կտուգանվի:

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

# ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐՏԻՆԻ ԹԱՐԶՅԱՆ



2021 թվականի ապրիլի 8-ին, 73 տարեկան հասակում, կյանքից հեռացավ մեր համերկրացի, գյուղատնտեսության բնագավառի բազմափորձ ու ճանաչված մասնագետ Մերուժան Թարզյանը:

Մերուժան Մարտինի Թարզյանը ծնվել է 1949 թվականի օգոստոսի 20-ին, Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Ուչմանա գյուղում, մտավորականի ընտանիքում: 1974 թվականին ավարտել է Մոսկվայի Կ.Ա.Տիմիրյազեւի անվան գյուղատնտեսական ակադեմիայի ագրոնոմիայի ֆակուլտետը: Վերադառնալով հայրենի շրջան՝ աշխատանքի է անցնում գյուղվարչությունում՝ որպես հողաշինարար, իսկ երկու տարի անց, նշանակվում գլխավոր գյուղատնտես՝ բույսերի պաշտպանության գծով:

1980 թվականին Մ.Թարզյանը նշանակվում է «Գյուղքիմիա» արտադրական միավորման նախագահ եւ պաշտոնավարում մինչեւ 1993 թվականը: Այդ տարիներին նրա ղեկավարած միավորման տեխնիկան եւ անձնակազմը մեծ աջակցություն ունեցան 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժից տուժած աղետի գոտու վերականգնման աշխատանքներին:

1993-1996 թթ. Մ. Թարզյանը շրջանային վարչության աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության բաժնի պետ է նշանակվում, իսկ 1996-1998-ին՝ Ուչմանայի կոլտնտեսության վարչության նախագահ: Նա ակտիվորեն ներգրավված էր շրջանի հասարակական-քաղաքական կյանքին, եղել է կոմերիտմիության շրջկոմի բյուրոյի անդամ, կուսակցության շրջկոմի անդամ, ընտրվել Բոգդանովկայի քաղաքային խորհրդի պատգամավոր:

2000 թվականին Մ.Թարզյանն ընտանիքով տեղափոխվում է Հայաստան, Երեւան: 2000-2005 թվականներին նա աշխատում է Ազատամարտի վետերանների միությունում՝ որպես կազմբաժնի վարիչ: 2005 թվականից նշանակվում է ՀՀ գյուղնախարարությունում բաժնի պետ բուսասանիտարիայի գծով: Համահեղինակ է «Բուսասանիտարիան աշխարհում եւ Հայաստանում» տեղեկագրին:

2015 թվականից մինչեւ իր մահը Մարտին Թարզյանն աշխատում էր Հայաստանի գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմում՝ որպես գլխավոր փորձագետ:

Մերուժան Թարզյանի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում:

*Մի խումբ ընկերներ*

ՖՈՒՏԲՈԼ

# ՌՈՒՄԻՆԻԱ-ՎՐԱՍՏԱՆ՝ 1:2, ԽՈՐՎԱԹԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ՝ 1:1

Աշխարհի 2022 թվականի առաջնության խմբային փուլի նախապատրաստման շրջանակներում, Վրաստանի ազգային հավաքականը Ռումինիայում ընկերական հանդիպում անցկացրեց երկրի հավաքականի հետ եւ առավելության հասավ 2:1 հաշվով: Նշենք, որ Վրաստանի թիմը մինչ այդ ռումինացիների հետ անցկացրած 7 հանդիպումներից միայն մեկն էր ավարտել ոչ-ոքի, մյուսներում պարտվել էր:

Հունիսի 6-ին Վրաստանի հավաքականը հերթական ընկերական հանդիպումը կանցկացնի Հոլանդիայի հավաքականի հետ:

Հունիսի 1-ին Հայաստանի հավաքականը Խորվաթիայում ընկերական հանդիպում անցկացրեց աշխարհի փոխչեմպիոն Խորվաթիայի հավաքականի հետ: Հավասար պայքարում անցած հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 1:1:

Հայաստանի թիմը հաջորդ ընկերական հանդիպումը կանցկացնի հունիսի 5-ին, Շվեդիայում, տեղի հավաքականի հետ:




# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Գետ Վրաստանում, որը Մցխեթայի մոտ միանում է Կուր գետին: 4.Հայ մեծ առակագիր, «Դատաստանագրքի» հեղինակի վանքը: 10.Լիճ Հյուսիսային Ամերիկայում: 11.Անմարդկային, ստոր: 12.Բնության կործանիչ երեւույթ: 13.Հարմար, համապատասխան: 14.Արցախի հերոս Մոնթե Մելքոնյանի կեղծանունը: 16.Ոչ քաջ, վախկոտ: 17.Գրական ստեղծագործության տեսակ: 18.Նար-Դոսի վիպակներից՝ «Ես եւ ...»: 19.Հովվի նվագարան: 22.Հարավկորեական ֆիլմ՝ «Կայսրուհի ...»: 24.«Ծիծեռնակը ... է շինում, Ե՛վ շինում է, ե՛ւ երգում» (Ղ.Աղայան): 27.Ռուս հանրահայտ երգչուհի ... Պուգաչովա: 29.Աշխարհի ամենամեծ անապատը: 31.Համադասական շաղկապ: 33.Ուրիշ, ոչ նման, տարբեր: 34.Սայաթ-Նովայի դափով ... յարը: 35.Կինոյի հայտնի դերասանուհի ... Բորիսենկո: 36.Ունեցվածքից զրկված, աղքատ, սնանկ: 38.Առարկայի մաս: 40.Սիրիայի նախագահ Բաշար Ալ ...: 44.Հրեական ծագման տղամարդու Աստվածաշնչյան անուն: 46.Ռուս կինոռեժիսոր ... Տարկովսկի: 50.Ա.Պուշկինի հանրահայտ դայակը: 51.Մայր խոզ (ժող.): 53.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 54.Ընտանի կենդանի: 55.Երնեկ, ափսոս: 56.Հովհ. Թումանյանի ծննդավայր գյուղը: 58.Համո Սահյանի բանաստեղծություններից՝ «... բացվիր»: 60.ԱՄՆ-ի նահանգներից: 61.Լենինի դամբարանը Մոսկվայում: 62.«Վար, վար արա, ... արա, եզո ջան» (ժող. երգ «Հորովել»):

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հայոց շատ խելացի թագավոր: 2.Գետ եւ հովիտ Վրաստանում: 3.ԱՄՆ Նոբելյան մրցանակի դափնեկիր նախագահ ... Վիլսոն: 4.Հավասի, Շերամ, Շահեն: 5.Գետ Հայաստանում: 6.Կոմիտասի երգերից՝ «... ջան»: 8.Չքնած, արթուն վիճակ: 9.ԱՄՆ 42-րդ նախագահը: 13.Ֆրանսիացի մաթեմատիկոս, ֆիզիկոս, փիլիսոփա եւ գրող: 15.Լիճ Արեւմտյան Հայաստանում: 20.Ժամանակի միավոր: 21.Երկրաչափական մարմին: 23.Մշակաբույսի տեսակ: 24.Թեւի ոսկոր: 25.Հնագույն պետություն: 26.Ավստրիացի ֆուտբոլիստ Մարկ ...: 28.Ներքին օրգան: 30.Հիվանդության տեսակ: 32.Ղազախստանի մայրաքաղաքը: 36.Արեգակնային համակարգի մոլորակ: 37.Հայ նկարիչ, մեծ բանաստեղծ Շիրազի որդին: 39.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված հայ մեծ վիպասան: 41.Աշակերտ, մոնթ: 42.Գրիգոր Լուսավորչի հայրը: 43.Կաթոլիկ միանձնուհի, Նոբելյան մրցանակի դափնեկիր Մայր ...: 45.Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի լուսահոգի դերասանուհի ... Քարաջյան: 26.Հայ դիցուհի, սիրո եւ գեղեցկության աստվածուհին: 47.Երկարության չափման միավոր: 48.Հայոց այբուբենի տառերից: 49.Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ ... Մովսիսյան: 52.Կապի միջոց: 57.Պայմանի շաղկապ: 58.Երիտասարդ դերասան ... Ջանիբեկյան: 59.Օժանդակ բայ: 60.Վառ կարմիրը:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Սպանիել: 8.Կրեդո: 9.Խամ: 10.Ասթմա: 13.Ամենա: 18.Ոսոխ: 19.Սվալբարդ: 22.Անտառ: 23.Անեմիա: 28.Իդեալ: 29.Ամեհի: 32.Ժակ: 33.Ակոս: 34.Եփրեմ: 37.Ուտի: 39.Հոմս: 41.Անափ: 44.Ապատ: 46.Նոնա: 47.Իբն: 49.Հոն: 50.Նիկոլայ: 52.Մաշա: 54.Ֆիշեր: 55.Լանա: 56.Աջ: 57.Զարին: 58.Մեղա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հարթ: 2.Դիլա: 3.Էլխի: 4.ԲԿՄԱ: 5.Խերես: 6.Չոլախ: 11.Սավա: 12.Միլտ: 14.Մոպեդ: 15.Նոկիա: 16.Թառ: 17.Օդա: 20.Անբեկ: 21.Բազիս: 24.Նիկե: 25.Մետր: 26.Ալամ: 27.Ուժատ: 30.Մարո: 31.Հոգս: 35.Փչան: 36.Եղան: 37.Ումպ: 38.Իշտոյան: 40.Մանիշ: 42.Նովա: 43.Փարաջա: 44.Ագորա: 45.Ահալի: 48.Բնիկ: 51.Կեզ: 52.Մամ: 53.Շաղ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445